

Իսրայելեան հրասայլեր երէկ գիշեր աննպատակ, աչ ու ձախ կրակ բացին Ժենիւնի գաղթականներին մէջ: Դէպքէն քանի մը ժամ առաջ, անոնք յիսուն հրասայլերով ներխուժած են գաղթական ու անոր շրջակայքը: Բանակը սպառնաց բնակիչներուն՝ դուրս չգալ տուներէն եւ փակուած մնալ հոն ամբողջ գիշերը: Կ'ըսուի նաեւ, թէ կրնայ ամբողջ շաբաթը շարունակուիլ կրակմարի այս դրութիւնը Ժենիւնի մէջ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՍՊԻՏԱԿ ՏՍԼ ՄԷՋ

## ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՏԵՍԱԿՅԵՑԱԻ ՃՈՐՃ ՊՈՒՇԻ ՀԵՏ



Հարիրի՝ Սպիտակ Տաճ մէջ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ գիշեր ժամը 10:30ին (Պէյրուսի ժամով) տեսակցութիւն մը ունեցաւ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի հետ: Հանդիպումը կայացաւ Սպիտակ Տաճ մէջ:

Վարչապետը երէկ նաեւ տեսակցեցաւ Միջազգային Դրամատան նախագահ Ճէյմս Ուոլֆինսընի հետ: Ներկայ էին ելեմուտքի նախարար Ֆուատ Սինիորա եւ տնտեսութեան եւ առեւտուրի նախարար Պասէյ Ֆլէյհան:

Տեսակցութեան ետք, վարչապետ Հարիրի յայտնեց, որ Ուոլֆինսընը շնորհաւորած է իբրանական կառավարութիւնը՝ անցեալ տարի Լիբանանի արձանագրած յաջողութեան համար, բայց քննադատութիւն կատարած է պապականականացումի ծրագիրներու ուղղութիւնը համար:

«Վերջին երեք ամիսներուն մենք ուղղեցինք Միջազգային Դրամատան հետ մեր յարաբերութիւնները եւ կա՞գ առած ծրագիրներու գործադրութիւնը վերսկսաւ, իսկ այդ ժողովին Մ. Դրամատան պատասխանատուները վերահաստատեցին, որ ոչ մէկ հարց կայ այս գծով», ըսաւ ան, յայտնելով, որ այդ պատասխանատուներէն մէկը Մայիսի պիտի այցելէ Լիբանան:

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ ԱՅՑԵԼԵՑ ՍՖԷՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Լիբանանեան կուսակցութիւններու եւ պաղեստինեան կազմակերպութիւններու հանդիպումի որոշումներու հետապնդման յանձնարարութեամբ ներկայացնող պատուիրակութիւն մը երէկ առաւօտեան ժամը 10:00ին այցելեց մարտիններու Սֆէյր պատրիարքին: Պատուիրակութեան մաս կը կազմէր Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի մէկ պատուիրակութիւնը:

Հանդիպումին ընթացքին քննարկուած են պաղեստինեան շրջաններու վերջին իրադարձութիւնները: Շեշտուած է, որ իսրայէլեան բռնութիւնները սահման չունին, չեն խնայեր ոչ մէկը. փաստօրէն անոնք ոտնձգութիւններ կը կատարեն թէ՛ իսլամականութեան, թէ՛ քրիստոնէութեան խորհրդանշող մզկիթներու եւ եկեղեցիներու դէմ: Քննարկուած է նաեւ հոգեւորական ղեկավարներու ժողով մը կայացնել: Սֆէյր համաձայն գտնուած է, յայտնելով սակայն, թէ խօսքէն պէտք է անցնիլ գործի:

Սոյն հանդիպումին ետք, յանձնարարութեամբ ժողով մը գումարեց Մար էլիսա գաղթականներին մէջ: Կատարուեցաւ վերջին շրջանի գործունէութեան գնահատումը եւ աշխատանքներու հետապնդումը:

## ՊԵՐՐԻ ԴԱՐՉԵԱԼ ԿԸ ԲԱՅԱՏՐԵ ՓԱՌԸԼԻ ՀԵՏ ՉՏԵՍԱԿՅԵԼՈՒ ԻՐ ՈՐՈՇՈՒՄԻՆ ՊԱՏՃԱՌԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պերրի երէկ երեսփոխաններու հետ իր ունեցած հանդիպումին ընթացքին ըսաւ, որ այս հանգրուանին Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան հաստատելու հեռանկար չկայ, նկատի ունենալով իսրայէլի թշնամական եւ յարձակողապաշտ քաղաքականութիւնը:

Պերրի վերահաստատեց, որ ընդունելի չէ իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի առաջարկած Միջին Արեւելքի խաղաղութեան համար նոր խորհրդաժողովի մը գումարումը, որովհետեւ անոր նպատակն է շրջանցել Մատրիտի վեհաժողովի որոշումները:

«Շարոն կը փորձէ ներկայանալ խաղաղասէրի եւ

## ԸՈՒՆ ՓԱՌԸԼ ԱՄԱՐՏԵՑ ՄԻՋԻՆԱՐԵԻԷԼԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ԱՌԱՆՅ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐՈՒ



Ընդհ Փաուրլ եւ Արաֆաթ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուրլ երէկ աւարտեց խաղաղութեան առաքելութիւնը՝ առանց նուաճումներ արձանագրելու: Փաուրլ յաջողեցաւ պաղեստինեան քաղաքներէն մէկ շարքի իսրայելեան ուժերը վերջ տան պաղեստինեան քաղաքներէն մէկ շարքի կատարած մամլոյ ասուլիսի մը ընթացքին Փաուրլ ըսաւ, որ պիտի աւարտուի մը, որ ստատուի այն ատեն,

Շար.՝ էջ 3

## ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐԱՊԱՅԵԱՐ ԺՈՍՓԷՆ ԹԱՓ ԿՈՒ ՏԱՅ ՇԻՐԱՔԻ ԴԷՄ ՅԱՐՉԱԿՈՂԱԿԱՆԻՆ

ՓԱՐԻՉ, 17 (ՌՈՅԹԸՐԸ).- Ֆրանսայի վարչապետ Լիոնէլ ժոսփէն, որ հարցախոյզներու մէջ էտ մնացած է բաղադրուած իր գլխաւոր մրցակիցին՝ ներկայ նախագահ Ժաք Շիրաքի, Չորեքշաբթի օր թափ տուած է անոր դէմ իր յարձակողականին՝ նախագահական ընտրութեանց առաջին ռաուտէն չորս օր առաջ:



Լիոնէլ ժոսփէն

Ընկերավարական ժոսփէն օգտագործած է իտալիոյ մէջ Երեքշաբթի օր տեղի ունեցած ընդհանուր գործադուլին առիթը, զայն իբրեւ օրինակ առնելով՝ աշխատաւորական խռովութիւններու, որոնք, ըստ իրեն, պիտի դիմադրաւորեն երկրին կողմէ, եթէ պահպանողական Շիրաք վերընտրուի: «Նկատի ունենալով անցեալին պահատածը՝ երբ ան պատասխանատու էր եւ նկատի ունենալով անոր քաղաքականութիւնը, չեմ կարծեր, թէ առանց տագնապի պիտի հասնինք 2007», ըսած է ան ձայնասփիւռի «էօրլոփ 1» կայանին:

Նորագոյն հարցախոյզներուն արդիւնքները ցոյց տուած են, թէ կիրակի օրուան ընտրութեանց առաջին ռաուտէն, որուն ընթացքին 16 թեկնածուներ քուէներ պիտի հաւաքեն, ժոսփէն երկրորդ դիրքը պիտի զբաղէ, իսկ գլխաւոր երկու թեկնածուներուն միջեւ կայանալիք Մայիս 5ի

ընտրութեանց երկրորդ ռաուտէն, Շիրաք փոքր համեմատութեամբ յաղթանակ պիտի ապահովէ: 1995ի վերջերուն, այնքան Շիրաքի նախագահութեան նստաշրջանին սկիզբը, շաբթի մը մեծ ցոյցեր հարուածած էին Ֆրանսան՝ օրուան աշակողմեան կառավարութեան որդեգրած խիստ խնայողութեան քաղաքականութեան դէմ բողոքի արտայայտութիւններով:

Շիրաք 1997ին Ազգային Ժողովը լուծած էր, կանխահաս ընտրութիւններ կազմակերպելով, այն հաշիւով, որ իր պահպանողական մեծամասնութիւնը պիտի վերադառնայ՝ հանրութեան վերանորոգ գորակցութեամբ, սակայն անոր հաշիւը ձախող դուրս եկած էր ու ժոսփէն ընտրուած էր ընկերավարական գլխաւորութեամբ կառավարութեան վարչապետ:

## ՓՈՒԹԻՆ - ԲՈՉԱՐԵԱՆ ՅԵՌԱՉԱՅՆԱՅԻՆ ՅԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին Երեքշաբթի օր հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի հետ: Նախագահները քննարկած են Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի՝ Մայիսի Մոսկուայի մէջ կայանալիք նստաշրջանի նախապատրաստական աշխատանքներու ընթացքը եւ այդ ժիրին մէջ արժարած են անվտանգութեան այլ կառույցներու մէջ համագործակցութեան հարցերը:

Նախագահներ Քոչարեան եւ Փութին քննարկած են հայ - ռուսական համագործակցութեան որոշ բնագաւառներ, յատկապէս՝ մարդասիրական ոլորտին ներս:

## ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՄԷՋ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆԿԱՏԷ ԶԱՓԱԶԱՆՑ ՕԳՏԱԿԱՐ

Ազրպէյճանական «Պիլիք Տիւնիսի» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Ազրպէյճանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ռոս Ուիլսըն հանդիպում մը ունեցած է Ազրպէյճանի նախագահ Հայատար Ալիեւի հետ եւ անոր փոխանցած է վերջերս Հայաստան իր այցելութեան մասին տեղեկութիւններ: Ուիլսըն իր այցելութիւնը նկատած է «չափազանց օգտակար»: «Նման հանդիպումներու իրեն արդիւնք, Ազրպէյճանի եւ Հայաստանի միջեւ որոշ կապեր կրնան ստեղծուիլ, ինչ որ կը նպաստէ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման արագացման», նշած է Ուիլսըն հանդիպման ընթացքին:

Ռոս Ուիլսըն Երեւան այցելած էր Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Օրտոնէյի Պաշտօն այցելութեան հետ: Ըստ «Պիլիք Տիւնիսի» Միացեալ Նահանգներ կը փորձեն մերձեցնել Ազրպէյճանը եւ Հայաստանը, զանոնք մղելով գործակցութեան:

Ալիեւի հետ հանդիպումին ընթացքին Ռոս Ուիլսըն յայտնած է. «Մեզի՛ ամերիկացիներուս համար շատ կարեւոր է ուսումնասիրել Հայաստանի իրավիճակը, որովհետեւ մենք կը ջանանք օգնել ձեզի եւ նախագահ Քոչարեանին՝ հակամարտութեան լուծման համար»:

## ԼԵՌՆԱՅԻՆ ԳՐԱԲԱՐԻ ՏԱԳՆԱՊԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

## ՓԱՔԻՍԱՆ ՊԻՏԻՉՕՐԱԿՅԻ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ «ՀԱՄԱՀԱՐԵԿԱԿԱՆ» ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ Կ'ԸՍԷ ՆԱՌԱՋ ՌԱՆ

Երկուշաբթի, 15 Ապրիլին, Ազրպէյճանի պաշտպանութեան նախարար Սաֆար Ապիեւ հանդիպում մը ունեցաւ փաթեթատանց իր պաշտօնակիցին՝ գործառնաւորապէս իր պաշտօնակցան այցելութեամբ մը Պաքու կը գտնուէր: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան երկու երկիրներու բանակներուն միջեւ համագործակցութեան հեռանկարները, միջազգային քաղաքական իրավիճակը, ահաբեկչութեան դէմ միացեալ պայքարի միջոցներ եւ երկուստեք հետաքրքրութիւն ներկայացնող այլ հարցեր:

Հանդիպումէն ետք Նաուազ իման յայտարարեց, թէ Իսլամապատ միտ զօրակցած է Պաքուի, ոչ միայն Լեռնային Ղարաբաղի տագնապին, այլեւ բազմաթիւ այլ հարցերու պարագային:

Նաուազ իման ըսաւ. «Փաթեթատան, որ անջատողականութիւն եւ ահաբեկչութիւն կը դիմագրաւէ Քաշմիրի մէջ, ճիշդ պիտի չիսնայ օժանդակելու Ազրպէյճանին, լուծելու համար Ղարաբաղի տագնապը»: Ան նաեւ յայտարարեց, որ եթէ Պաքու կիրարկէ «հակահարեկական» գործողութիւններ, Փաթեթատան պիտի զօրակցէ:

Իր կարգին, Սաֆար Ապիեւ յայտնեց, որ փաթեթատանեակերական բանակցութիւններուն ընթացքին մեծ ուղադրութիւն յատկացուած է Հայաստանի «յարձակողապաշտութեան»: «Հակառակ անոր որ Ազրպէյճան կ'ուզէ խաղաղ միջոցներով ազատագրել բռնազրաւուած տարածքները, Ազրպէյճանի բանակը միշտ պատրաստ պէտք է ըլլայ ազատագրելու համար զանոնք: Շատ լուրջ պատրաստութիւններ այս ուղղութեամբ արդէն ընթացքի մէջ են եւ պիտի շարունակուին», նշեց ան:

Փաթեթատանեակերական բանակցութիւններու աւարտին, Սաֆար Ապիեւ եւ Համիտ Նաուազ իման ստորագրեցին պաշտպանութեան եւ զինուորական բնագաւառներուն մէջ համագործակցութեան փորձագոյ մը:

### ԼԻԲԱՆԱՆ ՏԱԿԱԻՆ ԶԵ ՈՐՈՇԱԾ ՎԱԼԵՆՍԻՈՅ ԺՈՂՈՎԻՆ ԻՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՐ

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտ երկնյա յատակ պատասխան չտուալ այն հարցումին, թե Լիբանան էլ Սուրիա կը մտածե՞ն վալենսիոյ ժողովը պոլիտիկ ենթարկելու մասին, եթե անիկա չստեղծե՞ն Իսրայելի անդամակցութիւնը եւ մասնակցութիւնը Եւրոպա - միջերկրական տարածքի արտաքին գործոց նախարարներու խորհրդատուները:

Համուտ ըսաւ, որ Լիբանանի եւ Սուրիայի արտաքին գործոց նախարարները Եւրոպական Միութեան ներկայ նստաշրջանին նախագահող Սպանիային կը պահանջեն ստեղծել Իսրայելի մասնակցութիւնը այս ժողովին, որ պիտի գումարուի Վալենսիոյ մէջ, Ապրիլ 22ին եւ 23ին, նկատի ունենալով Եւրոպական խորհրդարանի որոշումը՝ առկախելու Եւրոպա - Իսրայել գործընկերութեան համաձայնագիրի գործադրութիւնը, որովհետեւ Իսրայել չի յարգեր Պարսելոնայի յայտարարութիւնը:

Համուտ երկնյա տուած իր մամլոյ ասուլիսին մէջ ըսաւ, որ Լիբանան եւ Սուրիա այս դիմումը ներկայացուցած են, դիտել տալով, որ օրէ օր կը քողպեծուին պաղեստինեան շրջաններուն մէջ իսրայելեան ուժերու գործած ոճիւրները, եւ արաբական հանրային կարծիքը ցասում յայտնած է, իսկ միջազգային հանրային կարծիքը դատապարտած է այդ ոճիւրները:

«Հակառակ բոլոր դատարարումներուն եւ կոչերուն, ինչպէս նաեւ մարդկային իրաւանց կայմակերպութիւններու դիմումներուն, Իսրայել կ'ըսէ, որ պիտի շարունակէ իր ունեւորութիւնները նաեւ Բեթըհեմի Ս. Մանուէլ եկեղեցիին դէմ, արհամարհելով բոլոր քրիստոնեաներուն եւ իսլամներուն պագումները», դիտել տուաւ ան:

Այն հարցումին, որ եթէ Եւրոպա չընդունաւ դիմումին, Լիբանան եւ Սուրիա պոլիտիկ ենթարկե՞ն Վալենսիոյ ժողովը, Համուտ ըսաւ, որ մենք Եւրոպային կը պահանջենք այս կեցուածքը:

Միւս կողմէ, Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ահմետ Մահեր երէկ հեռաձայնեց Համուտի եւ անոր հետ քննարկեց շրջանային հարցերը:

## ՄԱՀԱԶԴ

- Տիկին Շաբէ Փափագեան եւ դուստրը՝ Այտա Տէր եւ տիկին Գրիգոր Փափագեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Վահէ Փափագեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Մանուկ Փափագեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Մինաս Ազատեան եւ դուստրը՝ Արշօ Տէր եւ տիկին Նաչիկ Չիլապուշեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Արամ Նազարեան եւ զաւակունք Տիկին Մարի Բէսմէեան եւ զաւակունք Սեփեթեան ընտանիք Պէքարեան ընտանիք Պալեան ընտանիք եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մօրեղբոր, քեռայրին, աներթը եւ հարազատին՝

### ԳԵՈՐԳ ՓԱՓԱԶԵԱՆԻ (Ծնեալ՝ Ալեքսանդրեթ)

Մահը, որ պատահեցաւ Երեքաբթի, 16 Ապրիլ 2002, յետ կարճատեւ հիւանդութեան:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարեցաւ Չորեքաբթի, 17 Ապրիլ 2002, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:  
● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:  
● Յուանկցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ամանուս, «Ժամ Մումեան» շէնք, Յրդ յարկ, Չորեքաբթի 17, Հինգշաբթի 18 եւ Ուրբաթ 19 Ապրիլին:

## ՄԱՀԱԶԴ

Տիար Առաքել Նաչատուրեան եւ դուստրը՝ Սօսի Տէր եւ տիկին Թորոս Նաչատուրեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Օլէկ Նաչատուրեան եւ զաւակունք Նաչատուրեան ընտանիք Մարտիրոսեան ընտանիք եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր եւ հարազատին՝

### ՄԱՐԻ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ (Ծնեալ՝ ՄԱՐՏԻՈՍԵԱՆ)

Մահը, որ պատահեցաւ Կիրակի, 14 Ապրիլ 2002ին:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարեցաւ Չորեքաբթի, 17 Ապրիլ 2002ին, կէսօրէ առաջ ժամը 10:00ին, Չալքայի Հայ Կաթողիկէ Ս. Նաչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուցաւ Այնճարի գերեզմանատունը:  
● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:  
● Յուանկցութիւնները կ'ընդունուին եկեղեցւոյ սրահը եւ հանգուցեալին բնակարանը, Մալթայի «Մար Էլիաս» փողոց, «Սուհէյլ Հաննա» շէնք Հինգշաբթի 18 եւ Ուրբաթ 19 Ապրիլին, եւ հանգուցեալին պակին՝ Օլէկ Նաչատուրեանի բնակարանը, Չալքա «Էլ Չղպի» փողոց, «Ռուքոյ ապու Նալիլ» շէնք, Շաբաթ 20 Ապրիլին:

## ՆԱԽԱԳԱՐ ԼԱՆՈՒՏ ԵՒ ՊԵՐՐԻ ԳՈՒՄԱՐԵՅԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ

Հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ իբրեւ արաբական վեհաժողովի նախագահ շարունակեց նախանցեալ գիշեր սկսած իր հաղորդակցութիւնները՝ վերջը դնելու համար պաղեստինեան շրջաններուն դէմ իսրայելեան վարդապետութիւններուն, եւ մասնաւոր Բեթըհեմի Ս. Մանուէլ եկեղեցիի շրջափակումին:



Նախագահ Լահուտ կ'ընդունի Պերրին:

Այս ծիրէն ներս օտար պետութեանց մէջ Լիբանանի դեսպաններ երէկ այցելեցին նախագահ Լահուտի. ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի մնացուցիկ անդամ երկիրներու, ՄԱԿի եւ Վատիկանի մօտ դեսպանները նախագահ Լահուտի ներկայացուցին տեղւոյն պաշտօնատարներուն հետ այս գծով իրենց ունեցած հաղորդակցութիւններուն արդիւնքներն ու անոնց վերաբերմունքը եկեղեցիին դէմ ոտնձգութիւններուն մէջ:

Ներքին մեծ մասի ազատագրումին, եւ միեւնոյն ուղին է, որ պիտի ապահովէ բռնազրաւեալ արաբական հողերու ազատագրումը:

Նախագահ Լահուտ ողջունի խօսք ուղղեց Կանայի ջարդի զոհերու հոգիներուն, ինչպէս նաեւ այսօր Պաղեստինի մէջ նահատակուողներուն եւ ընդգծեց, որ Կանայի եւ Լիբանանի մէջ իսրայելի գործած ջարդերը, ինչպէս նաեւ այս օրերուն Պաղեստինի մէջ գործող ջարդերը կը փաստեն, որ անկախաբար իսրայելի մէջ իշխող ինքնութեան, իսրայելեան քաղաքականութիւնը կը մնայ անփոփոխ, իսկ եթէ մնայ անփոփոխ, ապա Իսրայելի թշնամական եւ ոճիւրային ոճը կը մնայ նոյնը:

Կը, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի հետ երկուշաբթի օր տեղի ունեցած հանդիպումին արդիւնքները:

Պերրի ըսաւ, որ քննարկուած են ներքին եւ արտաքին ընդհանուր հարցերը:

Նախագահ Լահուտ նաեւ ընդունեց այցելութիւնը նախկին վարչապետ Սելիմ Հըսի, որուն հետ քննարկեց ընդհանուր վիճակը, տնտեսական պայմանները եւ պաղեստինեան շրջաններու իրադարձութիւնները, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի այցելութեան արդիւնքները:

Նախագահ Լահուտ երէկ նաեւ ընդունեց ընդհանուր դատախազ Ատնան Ատտուժի, պետութեան անվտանգութեան ուժերու ընդհանուր տնօրէն զօր. էտուար Մանսուրի եւ բանակի գաղտնի սպասարկութեան տնօրէն զօր. Ռեմոն Ազարի այցելութիւնները:

### ԿԱՆԱՅԻ ԶԱՐԴԻ ՏԱՐԵԼԻՅԸ

Կանայի ջարդի վեցերորդ տարեկիցի նախօրեակին, նախագահ Լահուտ ողջունի խօսք ուղղեց անոր զոհերու յիշատակին, ընդգծելով, որ այսօր Պաղեստինի մէջ պատահող դէպքերը կ'ընդունուին են վեց տարի առաջ հարաւային Լիբանանի մէջ պատահածին, երբ թշնամի ուժերը կոծումին թիրախ դարձան Ֆինիլի կեդրոնատեղիին մէջ ապաստանած քաղաքայիններ՝ կիներ, երեխաներ եւ տարեցներ որոնցմէ գոհ գացին 105 հոգիներ եւ արձանագրուեցան բազմաթիւ վիրաւորներ:

Ան վերահաստատեց, որ լիբանանցիներու դիմած դիմադրութեան եւ նահատակութեան ճամբան առաջնորդեց հարաւի բռնազրաւեալ շրջանները:

### ԿՈՒՉՈՒԻ

● ԱՅԱՆԵԱՆ ԸԱՍՏ. կարիք ունի հաշուապահուիչի մը, նուազագոյն 5 տարուամ փորձառութեամբ: Ըեռ. 01-255222:

**ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ**

**ՃԵՄԱՐԱՆԻ ԵՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**3 ՄԱՅԻՍ 2002 ԸՆԹՐԻՔԻ ԵՐԵԿՈՅ**

**4 ԵՒ 5 ՄԱՅԻՍ 2002 ՔԵՐՄԵՍ**

### ՏԵՍԱԿՑՈՒԹԻՆՆԵՐ

Նախագահ Լահուտ երէկ Պապատայի մէջ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիլ Պերրին եւ անոր հետ քննարկեց երկրի ընդհանուր վիճակը:

## ՇԵՅԻ ՖԱՍԼԱԼԷՍ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ՈՒՄՇԻՆԿԹԸՆԸ

Շեյխ Մոհամէտ Հիւսէյն Ֆատալլա երէկ ըսաւ, որ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի միջին արեւելեան շրջապտոյտը կատարուած է Միացեալ Նահանգներ - Իսրայել գործընկերութեան շրջագիծէն ներս, որովհետեւ Ուաշինկթըն մեղաւորեց իսրայելի արտաքին գործընկերութեան նպատակն էր հետապնդել այդ արշաւին քաղաքական առաջադրանքները, ըսաւ ան, յայտնելով, որ Միացեալ Նահանգներ մտահոգ են, որ Լիբանանի սահմանին վրայ նոր ճակատ մը կ'ընկնայ բացուիլ:

**ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ**

**ԼՕԽԻ «ԱՂԹ-ՄԱՐ» ՄԱՍՆԱԳԻՒՂ - ԱՅՆՃԱՐ**

**60 ԱՍԵԱԿԻ ԶԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱԸԱՆԴԵՍ**

**18 ՄԱՅԻՍ 2002**

**ԿՈՒՉՈՒԻ**

● Argenterie Mano Չալքայի մասնաձիւղին համար կարիք ունի վաճառող օրիորդի մը: Ըեռ. 01-888008 եւ 01-885168:

**ԿՈՒՉՈՒԻՆ**

● Փորձառու աղաման-դաշարներ: Դիմել՝ հեռ. 03-700804:

## ՊՈՒՐԶ ԸԱՍՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԿՐԱՆ ԼԵՒՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ ԱՉԳ. ԶՈՒԷՃ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՐՔԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ - ՎԱՃԱՌՔ

Շուրջապտոյտը կատարուած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի միջին արեւելեան շրջապտոյտը կատարուած է Միացեալ Նահանգներ - Իսրայել գործընկերութեան շրջագիծէն ներս, որովհետեւ Ուաշինկթըն մեղաւորեց իսրայելի արտաքին գործընկերութեան նպատակն էր հետապնդել այդ արշաւին քաղաքական առաջադրանքները, ըսաւ ան, յայտնելով, որ Միացեալ Նահանգներ մտահոգ են, որ Լիբանանի սահմանին վրայ նոր ճակատ մը կ'ընկնայ բացուիլ:

## ՊԵՐՐԻ ԴԱՐՉԵԱԼ ԿԸ ԲԱՅԱՏԻԷ...

Շարունակուած Ա. Էջէն  
Խաղաղութեան ձգտողի դիմադրումով, մինչ անոր իսկական նպատակն է ժամանակ շահել եւ «մարտել» Պաղեստինի մէջ իր գործած ջարդերը:  
Խորհրդարանի նախագահը խստիւ քննադատեց արաբական երկրոց կեցուածքները եւ դրուատիքով փոսեցաւ իսրայելեան յարձակումներուն դիմացող պաղեստինցի ժողովուրդին մասին:  
Պերրի անգամ մը եւս խօսեցաւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարին հետ հանդիպումին չմասնակցելու իր որոշումին մասին, բացատրելով, որ այդ կեցուածքին պատճառը Միացեալ Նահանգներու բացայայտ կողմնակցութիւնն է իսրայելի նկատմամբ:  
Երէկ Պերրի այցելած երեսփոխանները յայտնեցին, թէ ան վստահեցուցած է, որ մինչեւ վերջ պիտի հետապնդէ փոխադրամիջոցներու պատճառած օդի ապականոմը դարձանելու օրէնքին հարցը. ան դիտել տուաւ, որ այս գծով խորհրդարանը կ'առաջարկութիւնը պիտի հարցաքննէ Ապրիլ 29ի նիստին, ուստի կ'առաջարկութիւնը մինչեւ այդ թուականը ժամանակ ունի տակաւին քայլեր առնելու այդ օրէնքի գործադրութեան ուղղութեամբ:

### ՊԱՐՈՒԹԻ ԸԱՐՑԸ

Միւս կողմէ, խորհրդարանի նախագահը արտաքին գործոց, պաշտպանութեան եւ մարդկային իրաւանց հարցերու խորհրդարանական յանձնախումբերը հրահրեց այսօր Հինգշաբթի, զուտարեւել միացեալ ժողով մը, քննարկելու համար Իսրայելի կողմէ պաղեստինեան օրէնսդրական խորհուրդի անդամ Մարուան Պարզուլիի ձեռնարկած հարցը:

## ԱՊՐԻԼԵԱՆ ՁԵՆԱՐԿՆԵՐ

- ԹՐԻՓՈԼԻ Կազմակերպութեամբ Ը. Յ. Դ. ԼԵՍԻ «Կարո Սասունի» կորիզին: Տեղի կ'ունենայ Չորեքաբթի, 24 Ապրիլ 2002ին, երեկոյեան ժամը 7:00ին, Ազգ. Խրիմեան - Նուպարեան վարժարանի սրահին մէջ: Բանախօս՝ ԸՆԿ. ԸՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ
  - ԱՅՆՃԱՐ Կազմակերպութեամբ Ը. Յ. Դ. ԼԵՍԻ «Շաւարշ Միսաբեան» մասնաձիւղին: Տեղի կ'ունենայ Երեքաբթի, 23 Ապրիլ 2002ին, երեկոյեան ժամը 8:00ին, «Շտուկի» սրահին մէջ: Բանախօս՝ ԸՆԿ. ԸՐԻՍՏ ԼԻՊԱՐԵԱՆ
  - ՉԱՀԼԷ Կազմակերպութեամբ Ը. Յ. Դ. ԼԵՍԻ «Լամազասպ» կորիզին: Տեղի կ'ունենայ Կիրակի, 28 Ապրիլ 2002ին, երեկոյեան ժամը 5:00ին, Ճալալայի պկումբի սրահին մէջ: Բանախօս՝ ԸՆԿ. ԽԱՄԱԿ ԱՅՆԹԱՊԵՏԵԱՆ
  - ՃԻՊԷՅԼ Կազմակերպութեամբ Ը. Յ. Դ. ԼԵՍԻ «Արարատ» կորիզին: Տեղի կ'ունենայ Կիրակի, 28 Ապրիլ 2002ին, երեկոյեան ժամը 6:00ին, «Թռչնոց Բոյն»ի սրահին մէջ: Բանախօս՝ ԸՆԿ. ԶԱՆԹ ԱԻԵՏԻՍԵԱՆ
  - ՈՒՈՒՏԱ Կազմակերպութեամբ՝ Ը. Յ. Դ. ԼԵՍԻ «Ռաֆֆի» մասնաձիւղին: Տեղի կ'ունենայ Կիրակի, 28 Ապրիլ 2002ին, երեկոյեան ժամը 7:30ին, Ռաուտայի դաշտին մէջ: Բանախօս՝ ԸՆԿ. ՅԱԿՈԲ ԱՅՆԹԱՊԵՏԵԱՆ
- Ը. Յ. Դ. ԼԵՍԻ ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆ

Շալակեան Երեսփոխանական Գրասենյակը ամէն օր առաւօտեան ժամը 9:00ն կ'տարբեր ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:  
1) Հիւանդանոցային առողջապահութիւն (ուղաքար եւ պետական հիւանդանոցային բուժում):  
2) Ընկերային Ապահովութեան Ազգային Անտուկ (Տաման):  
3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:  
4) Գաղթականներու նախարարութեան հետ առնչուող հարցեր:  
5) Բնակարանային հարցերու նախարարութեան (խընտր) դիմումներ:  
6) Աշխատանքի նախարարութեան հետ առնչուող հարցեր:  
7) Զաղաքապետութիւններու հետ կապուած հարցեր:  
8) Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան (Ամն էլ Ամն) հետ կապուած հարցեր:  
9) Դատական եւ իրաւաբանական հարցերու մասին խորհրդակցութիւն եւ ցուցումներ:  
Դիմողները պէտք է ներկայանան «Շաղաղեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենյակ եւ կամ նախքան ներկայանալը հեռաձայնել 01-259881 եւ 01-242582 քիւերու:  
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆՆԵԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

**ՏԱՐԵԿԱՐՁԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ**

**VIDEOԻ ԿԱՍ ԸԾԻ ՎՐԱՅ VIDEO CLIPՆԵՐ**

**ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ**

Դիմել՝ ԱՐԱ ԶԵԶԵԱՆ ԸԱՍՏ. Ըեռ. 01 / 261696, 03 / 250518







# Հրամանատարական Գրքեր

## ԳԻՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ԼԵՔԱՆԱՆԻ ԻՐԱՒՈՒՆՔԸ ԱՄՐԱԿԱՅՈՒԱԾ Է

### Կ'ԸՍԷ ԵՐԵՍՓՈՒՅԱՆ ՄԱՐՈՒԱՆ ՅԱՐԷՍ

Մարդկային իրաւանց խորհրդարանական յանձնախումբի նախագահ Երեսփոխան Մարուան Գրքեր «Անուար» թերթին տուած հարցազրոյցով մը շեշտեց, որ պաղեստինցի ժողովուրդին ինքիֆատան պիտի շարունակուի հակառակ այն վայրագ յարակուսմանը, զորս կը շղթայագրեծուին սիոնական բանակին կողմէ Այսրյորդանանի գիւղերուն եւ քաղաքներուն վրայ: Ան ըսաւ. «Երջանային այս կացութեան յոյսին տակ պարտինք կանգ առնել հետեւեալ կետերուն առջեւ:

Ձ.- Իսրայէլեան կառավարութեան մարդկային իրաւանց գերագոյն յանձնակատարին նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը, Մէյրի Ռոպինսոնի գրաւեալ հողեր այցելելէ արգիլելը եւ պաղեստինցի ժողովուրդին վրայ պաշարման շղթայ մըն է մարդկային իրաւանց սկզբունքներուն դէմ, զորս որդեգրած է ամբողջ աշխարհը: Այս իրականութեան մեկնելով կը պահանջեմ, իրբեւ մարդկային իրաւանց խորհրդարանական յանձնախումբի անդամ, Իսրայէլը դուրս դնել մարդկային իրաւանց մարզին մէջ գործող բոլոր կազմակերպութիւններէն:

Ա.- Այն շարքերը, որոնք գործադրուեցան ժեմինի, Նապուսի եւ պաղեստինեան գրաւեալ միւս հողերուն մէջ, մաս կը կազմեն սիոնական վարչակարգը բնորոշած պայմանական իրադարձութիւններու ընդհանուր շրջագիծին: Այս վարչակարգի քաղաքականութեան էութիւնը ոչ միայն կը կայացայ յարձակողականութեան եւ բռնագաղթի միջոցով փորձերուն վրայ, այլեւ կ'ուղղէ դէպի ողջ արաբական շրջանին վրայ ձեռք դնելու գաղափարը:

Բ.- Հակառակ այս վայրագ ոնիրներուն, զորս կը կիրարկեն Շարունի գործակատարներն ու բանակը, յամենայնդէպս Միացեալ Նահանգներու կողմէ որդեգրուած քաղաքականութիւնը պատերազմին մասնակցելու քաղաքականութիւնն է. պատերազմ մը, որ սկսած է արդէն եւ տակաւին կը շարունակուի: Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի այցելութիւնը, որ բաւական ուշացաւ, իր ոնիրին մէջ յառջ երթալուն գծով Շարունի ամբողջական մղում տալու նպատակը:

Գ.- Իսրայէլեան կուսակցութիւններէն ոչ մէկը կը հակառակի տեղի ունեցած ոնիրներուն: Տարբերութիւն չկայ աշխատաւորական, Լիքուտ, Շաս եւ իսրայէլեան այլ կուսակցութիւններու միջեւ, որոնք ցոյց կու տան այսպէս կոչուած ներքին ժողովրդավարութեան մը գոյութիւնը սիոնական վարչամեքենային մէջ, բայց անկախ մեքենայի եւ ոնիրին ժողովրդավարութիւնէն:

### ԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՅՈՒՄՆԵՐԸ

Է.- Իսկ ինչ կը վերաբերի արաբական կեցուածքներուն, որոնք պետք էր բարձրացնային արաբական ժողովուրդներու կեցուածքներուն մակարդակին արաբական զանազան մայրաքաղաքներու մէջ, այս պաշտօնական կեցուածքները, որոնք խղաղութեան կոչելով կը մօտեցնան սիոնական վարչակարգին, իսկ այս վարչակարգը այս կոչելուն կը պատասխանէ ոնիրներով...

Արաբական բոլոր պաշտօնական կեցուածքները պետք է նպատակաւորուած ըլլան յստակ ուղղութեամբ եւ արտայայտութիւնը ըլլան արաբական ժողովրդային կեցուածքին: Պետք է իրագործուի Պէյրութի մէջ տրուած բոլոր որոշումները, մասնաւորաբար ինչ կը վերաբերի Իսրայէլի հետ համաձայնութիւն կնքած երկիրներուն, որոնք պետք է կտրեն իրենց յարաբերութիւնները այդ երկրին հետ:

Ը.- Պաղեստինցի ժողովուրդին դիմադրութեան վերջաւոր յոյսը եւ այդ ժողովուրդի նահատակներուն, մանուկներուն եւ կիներուն հպարտութեան կեցուածքները յոյս են յառաջիկայ սերունդներուն հետամար:

Թ.- Պաղեստինեան հարցը կենդանի հարց մըն է եւ, ինչպէս որ Իսրայէլ պարտուեցաւ հարաւային Լիբանանի մէջ, նոյնպէս ալ պիտի պարտուի գրաւեալ Պաղեստինի մէջ՝ ստեղծելու համար պաղեստինեան անկախ պետութիւնը եւ իրագործելու համար պատմական իրաւունքները, որոնցմով միայն պաղեստինցի ժողովուրդը ետ տոբի վրայ կը կենայ:

### ԵՐՈՒՊԱԿԱՆ ԿԵՅՈՒՄՆԵՐԸ

Դ.- Արեւմուտքի մէջ, պաղեստինեան հողերուն վրայ մարդկային իրաւանց դէմ տեղի ունեցող ոտնձգութիւններուն ահաւորութեան դիմաց կը զանազանուին երոպական պետութիւններուն կեցուածքները միջազգային գետնի վրայ արտայայտուած միւս կեցուածքներէն, որովհետեւ հարցը կը վերաբերի երոպական քաղաքակրթութեան, որ ամուր արմատներ ունի միւսմասանց գեղասպանութեան դէմ պայքարին մէջ: Նոյնիսկ ամերիկացի մտաւորականներէն շատեր նախաձեռնող եղան իսրայէլեան ոնիրները դատապարտելու գծով:

Ե.- ՄԱԿը. հակառակ անոր ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի պաղեստինցի քաղաքայիններու պաշտպանութեան համար միջազգային ուժեր ուղարկելու շարունակուող կոչելուն... Այս բոլոր կոչելը միջազգային որոշումներուն կողմին, տակաւին անտարբերութեան կը դիմաւորուին իսրայէլեան պետութեան կողմէ, պետութիւն մը, որ իր կարգին անդամ է ՄԱԿին:

Ինչպէս որ երոպացիները կը խզեն Իսրայէլի հետ ընկերակցութիւնը եւ կը սկսին արգիլել անոր գէներու ուղարկումը... այս բոլորը Իսրայէլը կը վերածեն միջազգային օրէնքէ դուրս պետութեան մը. եւ պետք է, որ ՄԱԿ վնաս կենցուածք մը որդեգրէ, կեցուածք մը, որ հասնի միջեւ ՄԱԿէն Իսրայէլի վնասման:

### ԳԻՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Ժ.- Լիբանան, որ դիմադրութեան զենքը բարձրացուած է, եւ տակաւին անոր կարգ մը շրջանները ենթակայ են իսրայէլեան բռնագրաւման... Ամբողջ Լիբանանը, իր բոլոր հատուածներուն, կ'ոնցնեն, ինչպէս նաեւ ժողովրդային եւ պաշտօնական կեցուածքներուն կողմին կողմին:

Մինչեւ այն ատեն որ կայ բռնագրաւում, կայ նաեւ դիմադրութեան իրաւունք: Լիբանանցիներուն պարտաւորութիւնն է թիկունք կանգնել դիմադրութեան, որ իր օրինակաւորութիւնը կը ստանայ Լիբանանի՝ իր հողերուն նկատմամբ ունեցած իրաւունքներէն:

Ան եզրակացուց ըսելով. «Սուրիա կը կենայ Լիբանանի կողքին, Արաբական վեհաժողովն ալ կեցաւ անոր կողքին՝ մասնաւոր դիմադրութեան հարցին գծով, նոյնիսկ եթէ Քոլին Փաուլը ՊՊԸ Երաբարի ինքնաթիռով շրջագայի հարաւի վրայ»:

ՌԱՄԻ ՊԼԱՅՊԵԼ

«Անուար»

# ԵՐԻՏԱՍԱՐԴ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐ՝ «ՊԵՐԿԵՐ ՔԻՆԿ»Ի Մէջ

Երիտասարդներ սովորական ձեւով «Պերկեր Քինկ» մտան ու նստան սեղաններուն շուրջ եւ իւրաքանչիւրը ապսպրեց իր ուտելիքն ու խմելիքը: Այս մէկը միջոց մըն էր, որ պէտք էր երիտասարդներ իրենց ծրագիրը իրագործէին: Քինկ ետք ճաշը եկաւ եւ ամէն մէկ երիտասարդ ափսոսանքով, առանց պատահաւորութեան, գնաց ու զայն թափեց կողովին մէջ: Այս վերջինը ամերիկեան ձեւ մըն է, ըստ որուն, ճաշարան մտնողը ինքնիրեն կը սպասարկէ: Քինկ ետք անոնք պայտակներէն հանեցին պաղեստինեան գծաւոր քեֆիէներ եւ խաւաքարտէ պատրաստուած պզտիկ պատառներ եւ գետինը՝ հաշուէին մեքենային առջեւ փոխելով գանձոք, ծալապատիկ նստեցան:



Երիտասարդները «Պերկեր Քինկ» մտան ու նստան սեղաններուն շուրջ:

«Իսրայէլեան փամփուռ տին նեցուկ մի՛ կենար, պոյրթի ենթարկէ թշնամիին արտադրութիւնները», «Մեր ղեկավարները անգոր են՝ սակայն մենք կարող ենք. իսկոյն պոյրթի ենթարկէ», «Պոյրթի ենթարկէ ամերիկեան արտադրութիւնները եւ պիտի փրկես պաղեստինցիին կեանքը: արագորէն գործի անցիր» եւ նման կարգախօսներով պատառներ պարզեցին «Պերկեր Քինկ»ի տարածքին նստած երիտասարդները:

Ամերիկեան ճաշեր սպասարկող այդ ճաշարանէն սկսաւ ամերիկեան արտադրութիւնները պոյրթի ենթարկելու կոչը: Երիտասարդները հանդարտ ու լուռ էին: «Մենք չենք ուզեր հարցեր ստեղծել, չենք ուզեր ճաշարանը բանդել, կ'ուզենք, որ հասկնաք այդ մէկը»: այս էր երիտասարդներուն համաձայնութիւնը, զոր անոնք գործադրեցին առանց որեւէ իրարանցում յառաջանելու:

«Պերկեր Քինկ»ի պաշտօնեաները յանկարծ իրենք զիրենք գտան լուռ ցոյցի մը դէմ յանդիման. լիբանանցի, պաղեստինցի, ֆրանսացի տանձէկ երիտասարդ՝ Երիտասարդուհիներ գործադրեցին այս լուռ ցոյցը: Ճաշարանէն դուրս, մայթը խճողուած էր մարդոցմով եւ արմուկը բարձր էր: Դուռին առջեւ նստած ցուցարարները կը գովէին լիբանանեան արտադրութիւնները եւ բարձր ձայնով կը պոռային, որ պէտք է պոյրթի ենթարկել ամերիկեան եւ իսրայէլեան արտադրութիւնները:

Կանչերը կը տարբերին, սակայն իմաստը կը մնայ նոյնը. չբախտելու ամերիկեան արտադրութիւնները եւ բացարձակ պոյրթի ենթարկել գանձոք: Անոնք չըջանի պատերուն վրայ այս առնչութեամբ արձանագրութիւնները գրեցին եւ թղթիկներ բաժնեցին ինքնաշարժով եւ քայլով անցողներուն:

«Պերկեր Քինկ»ի պաշտօնեաները դուռը գոցեցին ներսը եղողներուն վրայ եւ մարդիկը արգիլեցին ներս մտնելէ կամ դուրս ելլելէ: Սակայն աւելի ճիշդը յաճախորդները վախճան ներս մտնելէ, հակառակ հանր որ ներսը հանդարտ էր եւ ոչ մէկ խռովութիւն կար, իսկ այդ ժամանակամիջոցին ներսը գտնուողները առանց որեւէ իրարանցումի նստած մնացին եւ զարմանքով դիտեցին պատահածը:

«Պերկեր Քինկ»ի ցոյցը կը յաջողէր քաղաքացի-

ներուն ուղղած սպառնալիքին, որուն ճամբով «Լիբանանի մէջ ամերիկեան շահերը պոյրթի կ'ենթարկուէին պատերազմի ոճրագործ, Վիեթնամի, Նիքարակուայի, Փանամայի եւ իրաքի ժողովուրդին ջարդարար Քոլին Փաուլըի Լիբանան այցելութեան առիթով: Փաուլը նաեւ պաղեստինեան հարցին մէջ ամերիկեան կողմի գլխաւորն էր եւ Շարունի արարքներուն նեցուկը»: Այս սպառնալիքը բաժնուեցաւ Համարայի եւ Պլիսի մէջ, ուր տարածուած են ամերիկեան խանութները:

Սակայն այս սպառնալիքը հանդարտութեամբ եղած գործընթաց մըն էր եւ նոյնիսկ ապահովական ուժերը ներկայ չէին. անոնք եկան երիտասարդներուն ճաշարան մտնելէն ետք եւ միջամտեցին, որպէսզի տղաքը դուրս գան «Պերկեր Քինկ»էն եւ համոզեցին, որ անոնք վերջ տան ցոյցին: Ապահովութեան ուժերը նշեցին, թէ՛ «ներքին (Պաղեստինի) կացութիւնը կը պահանջէ, որ գործակցիք իրարու հետ, որպէսզի շարունակուին ցոյցերն ու զօրակցութեան հասնելները, սակայն ոչ սեփական տարածքներէն ներս»:

«Մենք կ'ուզենք այս հաստատութեան ճամբով պատգամ մը փոխանցել ամերիկացիներուն, ըսաւ աղջիկ մը. այդ պատճառով լուռ ներս մտանք եւ մնացինք: Անոնք դուրս չեկան՝ հակառակ հանդարտութեան կատարուած դուրս հանելու փորձերուն: Մօտաւորապէս ժամ մը անցած էր, երբ ապահովութեան ուժերը փորձեցին համոզել երիտասարդները, որ դուրս գան ճաշարանէն: անոնք համաձայնեցան երկու ժամի փոխարէն մէկ ժամէն դուրս ելլել ճաշարանէն:

«Մաքտանըլտ»էն «Պերկեր Քինկ» երկարող գիծը խճողուած էր ցուցարարներով, որոնց ետուզեող խճողում ստեղծած էր, իսկ երբ ցոյցը վերջ գտաւ, եւ ցուցարարներէն ներս գտնուողները դուրս եկան, անոնք ընկերներուն ձեռքերը ամբողջ բռնեցին եւ միասնաբար վերադարձան իրենց տեղը՝ ցոյցին, այլ աշխատանքներ եւ ծրագիրներ մշակելու համար:

Բնակաւաբար այս ցոյցին ընթացքին լրագրողներն ու նկարիչները ծեծէն բաժին ունեցան, որովհետեւ «արգիլուած է նկարել»:

ԱՊՐԻ ԺԵՊԸՐ «Սաֆիր»

## «ՍԱՖԻՐ»Ի ԼԱՐՅԱԶՐՈՅՑԸ ԺԵՆԻՆԻ ԳԱՂԹԱԿԱՅԱՆ ԱՅՅԵԼԱԾ ԱՌԱՋԻՆ ԼՐԱԳՐՈՂԻՆ ԸՏԵ

### «ԵՐԿՈՒ ՕՐ ՇԱՐՈՒՆԱԿ ԹՐԱՔԹԵՕՐՆԵՐԸ ԱՇԽԱՏԵՑԱՆ ՉԱՐԳԸ ՔՈՂԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

Թրաքթօրները դիւրեւ ցերեկ կ'աշխատին փորելով ժենին գաղթականների փողոցը: Ի՞նչ կ'ընեն այս քաղաքային մեքենաները զինուորականներու կողմէ պաշարուած շրջանին մէջ եւ ուր են այն «հարիւրաւոր դիակները», որոնք մասին խօսեցաւ իսրայէլացի զօրավար մը եւ ապ խօսքը ետ քաշեց:

Հակառակ այն վտանգին, որուն ենթակայ են լրագրողները եւ բարեսիրական կազմակերպութիւնները ներկայացուցիչները, ֆրանսացի լրագրող Քիեռ Պարպանսիէ կը պահէ ժենինի գաղթական մտնել, երկու օր հոն մնալ եւ անկէ դուրս գալով վկայել հոն պատահած ահաւոր դէպքերուն մասին:

«Սաֆիր»ը հեռաձայնային հարցազրոյց մը ունեցաւ ժենինի մէջ գտնուող լրագրողին հետ: Առաջին հերթին հարցուցինք, թէ ինք ինչպէս կը գտնուի գաղթական. ան ըսաւ, թէ գաղթական տանող գլխաւոր պողոտան խճողուած էր իսրայէլացի զինուորներով, այդ պատճառով ալ, այլ նկարիչի մը հետ մտած են իսրայէլեան դիւր մը եւ հոնկէ քայլով կանաչ գիծը անցնելէ ետք հասած են պաղեստինեան Ռուսիան, ապա Պարբին գիւղը, որ կը նայի պաղեստինեան գաղթականներին: Սակայն դէպի վերջին տանող ճամբաները կրկին լեցուած էին իսրայէլեան հրասայլերով եւ զինուորներով, այդ պատճառով անոնք ըլլուրներուն վրայէն քայլով պահուրտելով հասած են գաղթական, ուր մեռելային լուսթիւն կը տիրէր: Չորս դին ծածկուած էր ուղեւոր մնացորդացով եւ փամփուռներով, սակայն ոչ մէկ զինուոր կար հոն: Զգուշութեամբ մտած են նեղ թաղ մը, ուր գտնուող տունէ մը ձայնը լսելով տատամելով եւ վախնալով դուռը զարկած են: Տօգոյն դէմքով կին

մը դուռը բացած է եւ մտած են ներս, ուր ջով ջով նստած էին շուրջ 20 անձեր: Հոնկէ անոնք կը գտնուեն տեսնել գաղթականներ, ուր Թրաքթօրները անդադար կ'աշխատին եւ ահաւոր տեսարաններ կը պարզուէին: Լրագրողն ու իր ընկերակիցը ուզած են ետ դառնալ, սակայն հրասայլի ձայնը առնելով երկու օր եւս մնացած են շրջանին մէջ:

Անդրադառնալով շրջանին մէջ պատահած դէպքերուն, պաղեստինցիները իրենց պատմած են, թէ իսրայէլացիները անխնայ կոտորած են ամէն ինչ, ուզած են ոչնչացնել, այն ինչ որ կեանքի նշոյլ ունի իր մէջ: Շրջանին մէջ հարիւրաւորները ջարդուած են, իսկ մնացեալը ամէն երկվայրկեան ենթակայ են մահուան կամ ահաւոր շարժարանքի: «Մենք այնպիսի բաներ տեսանք, որոնք իբրեւ մարդ մեզ արժեքակցեցին. մենք չենք վախնար մահէ, այլ կը վախնաք այն հասարակականութեան, որուն հարաւորներն են տառապանքէն, որուն կրնան ենթարկել իսրայէլացիները», ըսած է պաղեստինցի մը:

Փողոցներուն ծայրերը պահուրտելով լրագրողն ու նկարիչը կը գտնուեն մօտենալ գաղթականների կեդրոնական մասին: «Մեր տեսածը սարսափելի էր, ըսաւ Փ. Պարպանսիէ, պատահածը նման է 1945ին Պերլինի մէջ պատահած դէպքերուն: Հարիւրաւոր տուններ

ՏԱՀԱ ՇԱՄՍ

«ՍԱՖԻՐ» (յապաւուած) Ծար.՝ էջ 8

# Կոնցակասն

## Ո՞ՒՐ ԵՆ, Ի՞ՆՉ Կ'ԸՆԵՆ...

ՆԱՍՏԻ ՔԵՄՊԸԼ

Աշխարհահռչակ մանր-քեց նաոմի Գեյմպլը վերջերս Պրազիլ ալյուրաբեր է արձակուրդի համար: Պրազիլի ան յայտարարած է, թե մշակութային յայտագրերը պիտի ներկայացնէ «Էմ. Ֆի. Վի.» կայանին համար, եւ թէ՛ կը փափաքի հանդիպիլ պրազիլցի ֆուտբոլիստ Ռոնալդոյին:



Սեւամորթ մանրքեցը նոյն առիթով հերքած է այն ըսի - ըսանքը, որոնք համաձայն՝ ինք կոչու կը վարուի լրագրողներուն հետ, դիտել տալով, որ յաճախ վերջինները անպատշաճ հարցումներ կ'ուղղեն իրեն:

### ՍՈՖԻԱ ԼՕՐԵՆ

Երկար ամիսներու բանակցութենէն ետք, իտալացի անուանի դերասանուհի Սոֆիա Լօրէն համաձայնեցաւ ծանուցումը կատարել լեհական դրամադրութեան:



Մանուցումը ընդամենը մէկ վայրկեան կը տեւէ եւ իտալացի գեղեցկուհին կը յայտնուի գիշերային սեւ երկար հագուստով մը: Տուեալ դրամաին ընկերութեան տէրը յայտնած է, որ Սոֆիա Լօրէնը ընտրած է իր ծանուցումին համար, նախ՝ որովհետեւ ան միջազգային համբաւ կը վայելէ, իսկ երկրորդ՝ կու գայ իտալիոյ Նափոլի քաղաքէն, որ նշանաւոր է իր խմորեղէններով:

### ՔԱՄԻԼԱ ՓԱՐՔԸՐ

Բրիտանական «Տէլիֆիլմ» թերթին կողմէ հրատարակուած հարցախոյզի մը արդիւնքներուն համաձայն, բրիտանացիներուն մեծամասնութիւնը համաձայն է, որ Չարլզ Իշխանը ամուսնանայ տարիներու իր բարեկամուհիին՝ Քամիլա Փարքըրին հետ, պայմանաւ որ այս վերջինը թագուհի չըլլայ:



Նշենք, որ այս հարցախոյզը կատարուած է էլիզաբէթ թագուհիին թագադրութեան 50րդ տարեդարձին առիթով: Նոյն առիթով, բրիտանացիներուն մէկ կարեւոր տոկոսը համոզում յայտնած է, որ 75 տարեկան թագուհին լաւագոյն ձեռնարկ կատարած է իր պաշտօնը:

### ԳԵՂԵՅԱԳԻՏԱԿԱՆ

#### ԴԵՄՔԻ ԾԵՓՈՒԿԸ

Գիտէ՞ք, թէ դէմքը ծեփելու լաւագոյն պահարկներն ո՞րն են, երբ արդէն որոշած ենք տունէն դուրս չելլել եւ գնել պատրաստ ծեփուկներ եւ կամ տունը պատրաստել՝ բնական միջոցներով: Քիչ մը երեւակայութեան գարկ տալով կարելի է այլազան ծեփուկներ պատրաստել աւոքատոյով, մեղրով, նուշի ձէթով եւ կամ՝ կիտրոնի հիթով, հաւկիթով, պաննով, ելակով, վարունգով եւ այլն:



Թելադրելի է, որ որեւէ ծեփուկ առնուազն քառորդ ժամ մնայ մորթին վրայ եւ ապա մաքրուի թուղթէ թաշկինակով մը եւ դէմքը ցողուրուի դաղը ջուրով:

#### ԴԵՄՔԸ ՇՊԱՐԷ ՄԱՔՐԵԼԸ

